



ՎԱՀԱՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՎՈՍ

ՀՈՎՎԱԿԱՆ ԱՅՑ ՀՆԳՈՎԱՅՈՒԹՅԱՆ

1944 թ. հոկտեմբերի 25-ին Նորին Ս. օծություն Ս. Տ. Գեորգ Զ-ի (այն ժամանակ ազգընտիր տեղակալ) սրբատառ կոնդակով նշանակվեցի Իրան-Հնդկաստանի Հայոց Թեմի առաջնորդ և 1945 թ. սկզբներում մեկնեցի պաշտոնավայրա— Նոր Ջուղա: Հին Հնդկաստանի հայ գաղութի նկատմամբ մեր ղեկավարությունը հեռակա բնույթ ունեւր և մենք սպասում էինք հարմար առիթի՝ անձամբ այցելել բախտի անագորույն հարվածով պոկված և հեռու հորիզոնների տակ տարագրված հայրենասեր հնդկահայությանը: Այդ կապակցությամբ մենք դիմել էինք Մայր Աթոռին և սպասում էինք կարգադրության: Եվ ահա ազգիս վեհափառ Հայրապետը իր 1948 թ. մարտի 20-ի հրամանով առաջարկեց մեզ հովվական այցելություն տալ հնդկահայությանը, ծանոթանալ նրանց կարիքներին ու վերահասու լինել եկեղեցական և ուսումնական գործերին:

Ի կատարումն Նորին Սրբության հրամանի, 1948 թ. ապրիլի 2-ին, ցերեկվա ժամը 1-ին, հոծ բազմության ուղեկցությամբ, Ն. Ջուղայից ճանապարհվեցինք Իսպահան քաղաքի օդանավակայանը: Հակիրճ ճառից ու բարեմաղթություններից հետո, մենք բաժանվեցինք ուղեկցող քահանաներից և հավատացյալներից: Սավառնակը օդ բարձրացավ ժամը 2 և 15 ժողովին հասանք Թեհրան: Օդանավակայանում մեզ ընդառաջ էր եկել Թեմակալ Առաջնորդ Տ. Ռուբեն արքեպիսկոպոս Դրամբյանը՝ Թեհրանի մի շարք ազգայինների հետ միասին: Փոխադարձ ողջունի ճառերից հետո, մենք ճանապարհվեցինք քաղաք և հյուրասիրվեցինք առաջնորդարանում:

Մի քանի օր Թեհրանում մնալուց հետո, ապրիլի 10-ի առավոտյան ժամը 9 անց 30 ժողովին, քահանայական դասի և մեծ թվով ազգայինների ուղեկցությամբ, ճանապարհվեցինք օդանավակայան: Ժամը ուղիղ 10-ին, ապրիլյան դեղատեսիլ պայծառ մի օր, սավառնակն օդ բարձրացավ և ուղղություն վերցրեց խալիֆաների հուշակավոր պատմական Բաղդատ մայրաքաղաքը: 30—40 ժողովից հետո մենք անցանք Իրանի ավազոտ տարածությունները և մտանք Իրաք: Տեսարանը միանգամայն փոխվեց. այժմ արդեն բոլորովին այլ բնություն էր, այլ կլիմա:

Շուտով երևաց արծաթափայլ օձապտույտ մի հսկա ժապավեն: Իսկույն կռահեցի, որ այդ պատմական Տիգրիս գետն է, որ իր սկիզբն առնում է Հայկական լեռներից, հոսում դեպի ծով՝ կյանք և կենդանություն պարգևելով իր ափերի վրա տարածվող տափաստաններին: Սավառնակից պարզ երևում էին արևի տակ հեզորեն օրորվող արմավենիները, որոնք այնքան գեղեցիկ նկարագրված են մեծանուն բանաստեղծ Ա. Իսահակյանի «Աբու-Լալա-Մահարի»-ի մեջ:

Վերջապես սավառնակը վայրէջք կատարեց: Կայարանում մեզ ընդառաջ էին եկել Թեմակալի փոխանորդ Տ. Գրիգոր քահանա Հակոբյանը և Թեմական խորհրդի անդամները: Վեհափառ Հայրապետի և իմ կողմից ողջունելուց հետո, փոխանորդ հայրը մեզ հրավիրեց առաջնորդարան, որը գտնվում է մի շափազանց նեղ փողոցի վրա: Առաջնորդարանի բակում է հայոց եկեղեցին և դպրոցը:

Տեր հոր պատմելով, Իրաքում կան մոտ 30.000 հայեր: Հայկական ամենախոշոր գաղութը գտնվում է Բաղդատում, որն ունի դարոց 500 աշակերտ-աշակերտուհիներով: Կան մեծահարուստ հայեր: Հայ աշխատավորները խանդավառված են հայրենիքի վերելքով և ցանկանում են օր առաջ ներգաղթել Սովետական Հայաստան:

Չնայած ապրիլի սկիզբն էր, սակայն հեղձուցիչ օդը նեղում էր բոլորիս: Ժամը 2-ին հյուրանոցում ճաշելուց և հանգստանալուց հետո, ժամը հինգից-եոթը, Տ. Ռուբեն Արքեպիսկոպոս Մանասյանի հետ, որ դիպվածով Բաղդատում էր գտնվում, մեքե-

նա բարձրուղեղ հպարտորեն երկինք է սլացել և վերևի մասում հովանոցի նման բացվել ու իր ստվերաշատ սաղարթներով շունչ է տալիս սոսկալի շոգից հեվացող բնակչությանը:

Տիգրիսը քաղաքը բաժանում է երկուսի: Աջ կողմում գտնվում են բավական թվով երր շենքեր: Բաղդատում կան մեծ թվով սրճարաններ՝ լիքը հաճախորդներով: Սովորաբար, համանման դասի մարդիկ հավաքվում են իրենց դիրքին համապատասխան սրճարաններում:

Բաղդատի հայերը լսելով իմ գալուստը՝ ամեն կողմից դիմում էին մեզ և ցանկա-



Վահան Սրբազանը Բոմբեյում մի խումբ հավատացյալների հետ:

նայով շրջեցինք հին և նոր Բաղդատը: Հինը՝ չափազանց կեղտոտ էր, ծուռ ու մուռ նեղլիկ փողոցներով, տները մեծ մասամբ միհարկ էին, իսկ փողոցները, բացի կենտրոնականից նեղ էին և փողոտ: Փողոցների երկու կողմում, կարգապահ զինվորների նման շարված էին արմավենիները: Հիբավի, չափազանց գեղեցիկ ծառ է արմավենին.

նում էին հյուրասիրել: Բնական է, չէի կարող բավարարել բոլորի խնդրանքը:

Ապրիլի 11-ին, առավոտյան ժամը 9-ին, Տ. Ռուբեն Սրբազանի ուղեկցությամբ ճանապարհվեցի օդանավակայան և ժամը 10-ին, ութ տեղանոց գեղեցիկ սավառակով, թռա Բասրա: Ընդառաջ էին եկել տեղի հայերից ոմանք՝ Տ. Գեղամ քահանայի գլխավորու-

խյամբ: Լավ տպավորություն թողեց ինձ վրա տեր հայրը — հեղահամբույր, կրթված անձնավորություն էր: Նա ավարտել է Երևանյանի ժառանգավորաց դպրոցը: Հայ համայնքը նախաձեռնեց առաջարկեց, սակայն արտոժակ չունեինք, բավականացանք միմիայն 2 բաժակ սառը ջրով:

Ժամը 12 և 25 ռուպեին օրհնեցինք տեղական համայնքն ու քառամոտոր մի հսկա սավառակով ճանապարհվեցինք Քարաշի, որին տեղացիները Քրաշի են կոչում: Ճանապարհը մեծ մասամբ թռչում էինք ծովի վրայով:

Վերջապես երեկոյան ժամը 9-ին, հասանք Քրաշի: Սավառակը վայրէջք կատարելուց հետո, ճանապարհորդներին թույլ չտրվեց անմիջապես իջնել ցած: Տաս ռուպեի սպասումից հետո, սավառակ մտավ սանիտարական համազգեստով մի օրիորդ և խոլերայի ու ծաղկի դեմ սրսկման տեղեկանքներ պահանջեց: Նա ծանոթ չէի Հնդկաստանի երթևեկության կանոններին և չէի վերցրել այդ տեղեկանքներից և ոչ մեկը: Չնայած օրենքով անթույլատրելի էր այդ, բայց բժիշկը հայտնեց, որ ինքը մեծ հարգանք է տածում դեպի հոգևոր դասը, ուստի և բացառություն է անում մեր նկատմամբ: Շնորհակալություն հայտնելով, հեռացանք:

Րոմբեյից Քրաշի մեզ դիմավորելու էր եկել ինժեներ Վ. Խաչատրյանը, 28 տարեկան վառվռուն մի երիտասարդ: Գիշերեցի ծղանավակայանին կից հյուրանոցում: Գիշերն անտանելի շոգ էր, դժվարանում էի շնչել:

Հետևյալ օրը, ապրիլի 12-ին, ճաշից հետո, ժամը 2 և 30 ռուպեին, քառամոտոր սավառակով թռա Րոմբեյ, ուր հասն ժամը 6-ին: Օդանավակայան էին եկել Րոմբեյի հայոց եկեղեցական վարչության լրիվ կազմը և համայնքից զանազան անձնավորություններ տեղական հովիվ Տ. Մակար Ասատուրյանի զխավորությամբ: Դիմավորողները շերմորեն ընդունեցին մեզ: Օրհնելուց ու համառոտ բարի գալուստի ճառից հետո՝ ծանոթացա ընդառաջ եկողներին: Սառը օշորակով հյուրասիրվելուց հետո, ուղևորվեցինք քաղաք: Տեղական հայ համայնքը սպասում էր եկեղեցում: Ժողովուրդն ինձ տեսնելով հուզվեց. չէ որ 20 տարի է, որ հայ հապտացյալները չեն տեսել Ս. Էջմիածնի ներկայացուցչին իրենց մեջ: Եկեղեցի մտնելով աղոթեցինք, ապա դիմելով հավատացյալներին հաղորդեցինք Մայր Աթոռի և նրա գահակալ նորին Ս. օծություն Տ. Տ. Գեորգ. Զ. Կաթողիկոսի օրհնությունն ու հայրական ողջույնը իր սիրեցյալ հոտին: Լսելով Մայր Աթոռի և Ամենայն Հայոց Հայրապետի ա-

նունը, հավատացյալներից շատերը հուզված արտասվեցին: Քարոզից հետո ժողովուրդը հարց ու փորձ արեց Ս. Էջմիածնի, Մայր Հայրենիքի և Վեհափառ Հայրապետի մասին: Տեղավորվեցի Հնդկաստանի ռեալ մահալ կոչվող հյուրանոցում:

Ապրիլի 14-ին, այցելեցի Րոմբեյի հայոց Ս. Պետրոսի անվան եկեղեցին, որը կառուցվել է 1796 թ. Ս. Էջմիածնի նվիրակ Հակոբոս Արքեպիսկոպոսի ջանքերով: Եկեղեցին անշուք է, հնացած, խոնավ և փլուզման ենթակա: Ի նկատի ունենալով այդ, ինչպես նաև այն հանգամանքը, որ եկեղեցու բակի հարավային և հյուսիսային կողմերի հարևան տները վեց հարկ ունեն և բարձր հարկերով ապրող բնակիչներն ամեն տեսակ կեղտ են թափում եկեղեցու բակը և տանիքը, տեղի հավատացյալ համայնքը դիմեց մեզ և խընդրեց թույլ տալ քանդել խարխալած եկեղեցին, հարակից խարխուլ սենյակներն ու փոքրիկ խանութները և նոր շենք կառուցել: Նա, ըստ նախագծի, լինելու է վեց հարկից. առաջինը, երկրորդը և երրորդը հարկերը լինելու են բնակելի շենքեր, իսկ չորրորդ-վեցերորդում՝ եկեղեցին իր հույակալ հայկական գմբեթով: Այս առթիվ եկեղեցական վարչության անդամների հետ երկար խորհրդակցելուց, և մանրազնին քննարկելուց հետո, միջնորդեցինք Ազգիս Վեհափառ Հայրապետի առջև և ստացանք նրա համաձայնությունը:

Ցանկացա անձամբ տեսնել հայկական գերեզմանատունը և օրհնել: Հաջորդ օրը, քահանայի և վարչության անդամների ուղեկցությամբ գնացինք գերեզմանատուն: Արցունքներս սկսեցին թափվել, երբ բակը մտա: Որքան հայրենակարոտ պանդուխտներ, մտածում էի ես, աչքերը հայրենիքին հառած մեռել են օտարության մեջ, Հայրենիքի հողից և ջրից կարոտ: Անցյալում ինչ դժբախտ է եղել հայ ժողովուրդը — մինչև ուր են ցրված նրա գերեզմանները:

Սոսկալի կեղտոտ վիճակում գտա մեր ազգայինների շիրիմները: Հուզված «Ճողոց» և «Քրիստոս որդի Աստծո» ասացի, դիտեցի բոլոր շիրիմներն ու գերեզմանաքարերը, որոնցից մի մասը չէր կարդացվում, որովհետև մթնոլորտային պայմանների շնորհիվ ջարդվել ու թափվել էին: Համեմատաբար, լավ վիճակում է մյուս գերեզմանատունը, որը գտնվում է Սեյդիի Մզար վայրում: Այս գերեզմանատանը կա 84 գերեզման:

Րոմբեյում մնացի 1948 թ. ապրիլի 12-ից 28-ը և վերադարձիս՝ 1949 թ. փետրվարի 8-ից մինչև մարտի 5-ը: Այս ամբողջ ժամանակամիջոցում ղբավեցի եկեղեցական, կալվածական և կտակների գործերով: Եկեղեցական վարչության անդամները կարող

մարդիկ էին ու աշխատանքին առաջարկեցին՝ մեծապես օգնեցին մեզ:

Համայնքի մեջ համերաշխությունն ու փոխադարձ կապը էլ ավելի ամրապնդելու նպատակով երեք անգամ դաշտահանդես կազմակերպվեց, որոնց ընթացքում մասնակիցները ոգևորված ճանքեր էին ասում, երգում, պարում և հրճվում: Դաշտահանդեսները մեծ նշանակություն ունեցան ազգային ոգին, Մայր Աթոռի ու հայրենիքի գաղափարը նրանց մեջ վառ պահելու գործում:

Բոմբեյում կան մոտ 54—60 ընտանիք հայեր, մեծ մասը տաճկահայ: Մանկությունիցս ի վեր լսել էի Բոմբեյի հայերի առասպելական հարստության ու կտակների մասին: Իրականում, ոչ այդ հարստությունը դոյուքություն ունի, և ոչ էլ՝ կտակները: Ճիշտ է կան մի քանի կտակներ, որոնց ժառանգներն անգամ ի հայտ են եկած, սակայն բարյացակամ վերաբերմունք չի ցուցաբերվում նրանց ստացման համար: Այսպես, դոկտոր պրն Ս. Աբգարյանը 25 տարի է, ինչդատաստանական ատյանների դռներն է մաշում, սակայն դրամներն ստանալու դեռ ոչ մի հույս չկա: Բոմբեյում ոչ միայն մեծահարուստ հայեր, այլ միջին հարստության տեր մարդիկ անգամ չկան: Հայերի խոշոր մասը որակյալ ոսկերիչներ են ու բժիշկներ. վաճառականներ ու ծառայողներ քիչ են: Ցավալի է նշել, որ Բոմբեյում հայերը շունեն դպրոց ու ազգային այլ հաստատություններ:

Բոմբեյի հայ համատեղյալ համայնքը, Մայր Աթոռի նկատմամբ ունեցած իր որդիական պարտքը կատարելու նպատակով, ընայած իր դրամական սուղ միջոցներին, հանձն առավ Ս. Էջմիածնի հոգևոր շեմարանի մի սանի ծախսը իր վրա՝ վերցնել և 1948 և 1949 թ. թ. իր եկամուտների 5%-ը հատկացնել Լուսավորչի լուսն եկեղեցական տուրքին՝ հօգուտ Էջմիածնի: Ընդհանրապես, Բոմբեյի հայ համատեղյալներն աչքի էին ընկնում իրենց ջերմ եկեղեցասիրությամբ ու հայրենասիրությամբ:

Բոմբեյում հայերը հաստատվել են 17-րդ դարի վերջերին: Սակայն սկզբնաղբյուրներից հայտնի է, որ մինչ այդ թվականը ևս եղել են խոշոր վաճառականներ, որոնք հետաքրքրվում տեղափոխվել են այլ վայրեր:

Բոմբեյը Ճնդկաստանի դուռն է համարվում: Ունի խոշոր նավահանգիստ: Եվրոպայից և այլ երկրամասերից վաճառականական հարյուրավոր նավեր խաբիսն են ձգում այստեղ: Տեղի ազգայինների ուղեկցությամբ պատեցի քաղաքը:

Բոմբեյը, մանապիսիք նրա ծովափնյա մասը գեղեցիկ է. այնտեղ կարելի է տեսնել

երեք-չորս հարկանի տներ, ծաղկազարդ պուրակներ և այլն: Սակայն այս, այսպես կոչված եվրոպական քաղաքամասն է, ուր ապրում են տեղի և եվրոպացի մեծահարուստները: Այլ է պատկերը քաղաքի ճակատի մասում, ուր ապրում է հնդկի աշխատավոր ժողովուրդը. այնտեղ, մեծ մասամբ, քսենեֆոնյան տներն են և ծուռ ու մուռ փողոցներ:

Ընդհանրապես, հակադրությունը Բոմբեյում շատ է նկատելի: Այնտեղ դուք կտեսնեք տրամվայներ, ամերիկյան մեքենաներ, արտադրության ավտոմեքենաներ, բայց դրանց կողքին՝ ուղտի և ձիու կառքեր, իսկ ամենից տհաճը՝ շարաքաստիկ ուղեղները՝ կառքեր, որոնց լծված են և քաշում են մարդիկ: Այս վերջինը մեզ վրա շատ փառապատկարավոր է. դա բոլորովին չի համապատասխանում քրիստոնեական մարդասիրության բարձր սկզբունքին: Փողոցներում շատ են մուրացկանները: Երբեմն դժվար է ինձում ողորմություն տալ. տվեցիք մեկին ուղեղները խմբերով կթափվեն վրադ և դու ազատում լուծես: Կլիման Բոմբեյում սաստիկ տաք է և խոնավ: Այստեղ եղանակը փոքր ինչ գովանում է նոյեմբերի վերջերից մինչև փետրվարի վերջը: Նդանակը այդ ամիսներին նմանվում է Հայաստանի ապրիլի եղանակին: Ձյուն երբեք չի գալիս. ժողովուրդը տեղում ձյուն չի տեսել:

Ժողովուրդը մեծ մասամբ, բուրձայական է, կան և կրակապաշտներ, կաթոլիկներ և այլ դավանանքի պատկանողներ: Պարտում են բազմաթիվ կուղքերի: Բուրձայականների և կրակապաշտների տաճարները տեմպլ են կոչվում: Բուրձայական տեմպլների մուտքի առջև կախված են միջին մեծությամբ զատիկներ: Աղոթողները ներս մտնելիս զանազանում են, որով հայտնում են տվյալ կուղքին՝ թե գալիս ենք աղոթելու՝ լսիր մեր խնդրվածքը: Բոմբեյում է գտնվում զրադաշտների կենտրոնը: Անցյալում հալածվելով Պարսկաստանում, նրանք իրենց կենտրոնատեղին տեղափոխել են այստեղ: Հետաքրքիր է տեսնել զրադաշտներին առավոտյան արևածագին ծովի ափին ջերմեռանդ աղոթելիս:

Ձրադաշտականները, ինչպես հայտնի է, մահացածին չեն թաղում և ոչ էլ հնդիկների նման այրում են փայտի վրա: Հողը և ջուրը զրադաշտականների համոզմունքով սրբազան են և չպիտի պղծել: Հիշենք հայոց Տրդատ թագավորին, որը Հռոմ գնալիս նախնարեց ձիով գնալ՝ ծովը չպղծելու պայմանով:

Ձրադաշտականները մահացածին դնում են բարձր աշտարակի վրա, որը կոչվում է

լուծված աշտարակ: Դիակն աշտարակի վրա դնելուն պես, ըսկույն, նրա վրա են թափվում գիշատիչ թռչունները և միտը բզկտում: Դիակի մաքրված ոսկորները վերին ցանցից թափվում են ներքև խորը փոսի մեջ: Բոմբեյում զրադաշտական լուծված աշտարակը գտնվում է «Կախյալ» կոչվող քաղաքային այգու մոտ:

Բոմբեյն ունի նաև համալսարան: Կուլտուրական հաստատություններից առանձնապես աչքի է ընկնում քաղաքի Մատենադարանը՝ իր գեղեցիկ ձևավորված շենքով:

Այցելեցի գրադարանն ու հետաքրքրվեցի Հայկական բաժնով: Այնտեղ կային 300-ից ավելի հայկական ձեռագրեր, պարբերական հրատարակություններ, մատենագրեր և հնա-

տիպ գրքեր: Հնդիկ գիտնականները ըստ մատենադարանի տեսչի հայտարարության, հետաքրքրվում են հայագիտությամբ: Եվ դա բնական է. Արեւելքի հնագույն հնդիկ և հայ ժողովուրդները, սկսած առաջին դարից նախքան Քրիստոսը, սերտ փոխհարաբերության մեջ են եղել իրար հետ՝ պատմության էջերում արձանագրելով ազնիվ բարեկամության մի շարք փաստեր:

Ծանոթացա Մատենադարանի մյուս բաժինների հետ, շնորհակալություն հայտնեցի Մատենադարանի տեսչին՝ իր տված արժեքավոր բացատրությունների, ինչպես և Հայկական բաժինը խնամքով պահելու համար, և մեկնեցի ազգայիններիս մոտ:

(ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ)

